## Ռեսուրսներ Կալիֆորնիայի ԲՈԼՈՐ բնակիչների համար

Ի պատասխան վերջին շրջանում մեր համայնքին ուղղված մի շարք հարցերի.

Կալիֆորնիա նահանգում ապրում են անհատներ և ընտանիքներ, ովքեր ԱՄՆ քաղաքացիներ են, փախստական են, ներգաղթյալ են՝ փաստաթղթերով և առանց փաստաթղթերի, կամ ունեն կրթության կամ աշխատանքային ժամանակավոր վիզաներ: Կալիֆորնիայի բոլոր բնակիչներն իրավունք ունեն օգտվելու զարգացման և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծառայություններից՝ Կալիֆորնիայի Լանթերմանի օրենքի համաձայն, նրանց իրավասությունը շահույթ չհետապնդող տարածաշրջանային կենտրոնի կողմից հաստատելուց, և այլ հնարավոր օգնության կիրառումնի ամբողջությամբ ուսումնասիրելուց հետո: 2025 թվականի փետրվարից սկսած այս ծառայությունների օգտագործումը որպես կանոն չի խանգարելու քաղաքացիություն չունեցող մասնակիցների ներգաղթի կարգավիճակին: Եթե քաղաքացիություն չունեցող անհատները հետաքրքրված են այս ծառայություններով և ունեն հարցեր վերջինիս ազդեցության վերաբերյալ իրենց ներգաղթի կարգավիճակի վրա, ապա կարող են ծանոթանալ այս ուղեցույցին և խորհրդակցել ներգաղթի իրավաբանական ծառայություններ մատուցողի հետ: Մեր ահմայնքի մասնակիցներին կարող է հետաքրքրել նաև Ռեսուրսներ Կալիֆորնիայի ԲՈԼՈՐ բնակիչների համար վեբկայքի տեղեկույթը: Մենք վստահ ենք, որ Նահանգը և տարածաշրջանային կենտրոնները կկարողանան շարունակել իրենց ծառայությունները մատուցել Կալիֆորնիայի բնակիչներին:

Գործընկերություն
Զարգացման ծառայությունների բաժնի հետ